ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (սեպտեմբեր ամսվա վերջի դրությամբ)









2023թ սեպտեմբերի 30-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 454,2 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.4%-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 10.5 %-ով, իսկ 2021 թվականի սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ նվազելով՝ 1.9 %-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 244.9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 6.9 %-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 11.3%-ով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 2.5 %-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 209.3 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.5 %-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 3.4%-ով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 8.6 %-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 322.3 մլն ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.4 %-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 14 %-ով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 25.3 %-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 790.4 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7 %-ով, 2022 թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 14.8 %-ով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 26 %-ով,

6)ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 531.9 մլն. ԱՄՆ դոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.5%-ով, 2022թ սեպտեմբերի 30-ի նկատմամբ 0.3%-ով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 12.3 %-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 354.0 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.5%-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ նվազելով՝ 3.3 %-ով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 21.4 %-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 890,9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 14,6%-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 23.,1 %-ով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 64.8 %-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 209.3 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.5 %-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ 3.4 %-ով, իսկ 2021թ.սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 8.6 %-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 983.7 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.5 %-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 6.6 %-ով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ նվազելով՝ 3.4 %-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4 մլրդ 806.7 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 14.7 %-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 27 %-ով, իսկ 2021թ սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 102.6 %-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 531.9 մլն ԱՄՆ դոլար նվազելով՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.5 %-ով, 2022թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ 0.3 %-ով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ 12.3 %-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 421.4 մլն ԱՄՆդոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.8 %-ով, 2022թ.-ի սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ աճելով 6.5 %-ով, իսկ . 2021 թ-ի սեպտեմբերի 30-ի նկատմամբ՝ նվազելով 1.7 %-ով:

2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 79.24 %, ինչը ավել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 1.62 տոկոսային կետով, 2022թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշից պակաս է 0.22 տոկոսային կետով, 2021թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշից ավել՝1.31 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 20.50%, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 1.58 տոկոսային կետով, 2022թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ՝ ավել 0,27 տոկոսային կետով, իսկ 2021 թ, սեպտեմբերի 30-ի համեմատությամբ՝ պակաս1.18 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.26 %, ինչը 0,04 տոկոսային կետով պակաս է 2022 դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 2022թ.սեպտեմբերի 30-ի ցուցանիշից պակաս է 0.05 տոկոսային կետով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշից պակաս է 0.13 տոկոսային կետով:

2023թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 159.15 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 26.97 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 31.55 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 86.12 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 13.74 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 20.2 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 73.03 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 13.23 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 11.36 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2023թ. հունվար-սեպտեմբերին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 197.96 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 36.37մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 293.14 մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 284.76 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 112.6 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 128.66 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -86.79 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 76.21մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 421.79 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2023թ. հունվար-սեպտեմբերին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 100.69 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 101.5 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 92.8%-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 208.71 մլն դոլարի մայր գումար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 25.6%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 23.%-ով,

3) ստացվել են 176.10 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 26.9%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է՝ 105.3 %-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 309.40 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 43.1 %-ով, իսկ 2021 թ, ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 39.5 %-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2023թ. սեպտեմբերի 30 դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 808.6 մլրդ դրամ, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. սեպտեմբերի 30-ի և 2021թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 312.3, 397.1 և 691.8 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 2947 օր, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 257 օրով, 2022թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է 508 օրով, իսկ 2021 թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է 958 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 6.95%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.66 տոկոսային կետով, 2022թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ ավել է 1.03 տոկոսային կետով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ ավել է 2.42 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 3.32 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. սեպտեմբերի 30-ի և 2021թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ համապատասխանաբար մեծ է 0.7 , 1.87 և 2.19 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 15.65 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 2.6 տոկոսային կետով, 2022թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ՝ 3.13 տոկոսային կետով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ՝ մեծ է 7.74 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 81.03 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 3.3 տոկոսային կետով, 2022թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ՝ 5 տոկոսային կետով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի համեմատությամբ՝ 9.93 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2021-2023թթ. սեպտեմբեր ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2023թ սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 7.3 տարի: Այս ցուցանիշը 2022թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.7 տարով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30 -ի ցուցանիշից՝ 1.3 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 15 %, որը 2022թ. սեպտեմբերի 30-ի և 2021թ. սեպտեմբերի 30-ի մակարդակներից մեծ է համապատասխանաբար՝ 5,7 և 3.9 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2023 թ.սեպտեմբերի 30-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.9%, լողացող տոկոսադրույքով՝ 16.1%:
Ընդ որում, 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2022թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշից ավել է 0.01 տոկոսային կետով, իսկ 2021թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշից՝ 1.3 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 30%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 55,4%, ներքին պարտք՝ 44.6 %: Ընդ որում, 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2022թ.սեպտեմբերի 30-ի և 2021թ. սեպտեմբերի 30-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 4.3 և 16.9 տոկոսային կետերով: